ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹ ՅԱՆ

Ք.Մասիս Երկու հազար ինը թվականի մարտի տասնիններին

<< Արարատի մարզի, Մասիսի քաղաքային համայնքը, այսուհետ՝ «Վարձատու», ի դեմս համայնքի ղեկավարի լիազորված անձ, քաղաքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Արթուր Ֆելիքսի Բաղալյանը, ծնված՝ 29.07.1975թվականին, անձնագիր AE0663067, տրված 09.06.2000թ.-ին 044-ի կողմից, հաշվառված << Արարատի մարզ, ք. Մասիս, 3-րդ թ/մ, 3-րդ շենքի թիվ 45 բնակարանում /լիազորագիրը վավերացված է 03.02.2009թ-ին/, մի կողմից, և << կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի Մասիսի տարածքային հարկային տեսչությունն այսուհետ «Վարձակալ», ի դեմս պետի լիազորված անձ՝ Անահիտ Կարապետի Խաչատրյանի, ծնված՝ 15.06.1965թվականին, անձնագիր AF0297717, տրված 19.05.2001թ.-ին 044-ի կողմից, հաշվառված << Արարատի մարզ, ք. Մասիս, 3-րդ թաղ., 11 շենքի թիվ 24 բնակարանում, /լիազորագիրը վավերացված է 24.02.2009թ-ին/ մյուս կողմից, ավագանու 2009թվականի փետրվարի 11-ի N 03 և քաղաքապետի 2009թվականի փետրվարի 18-ի N84 որոշումների հիման վրա կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց /համաձայն տրամադրվող տարածքի հատակագծի հավելվածի, որը սույն պայմանագրի անբաժանելի մասն է/ Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել << Արարատի մարզի, Մասիսի քաղաքի, քաղաքապետարանի վարչական շենքի 2-րդ հարկում գտնվող, 579/հինգ հարյուր յոթանասունինը/ քմ. տարածքը, այսուհետ՝ «Գույք», որպես գրասենյակ օգտագործելու համար:

1.2. Սույն պայմանագրով վարձակալման նախատեսվող Գույքը տրամադրվել է Վարձակալին օգտագործման՝ ս/թ. հունվարի 12-ից և գործում է մինչև «31»դեկտեմբերի 2009թ.:

1.3. Գույքը << կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Մասիսի տարածքային ստորաբաժանման կողմից 28.10.2003թվականին տրված թիվ790007 սեփականության վկայականի հիման վրա սեփականության իրավունքով պատկանում է "Վարձատու"-ին:

1.4. Սույն պայմանագիրը կնքելու պահին վարձակալության հանձնված Գույքը գրավ դրված չէ, արգելանքի տակ չի գտնվում << կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Մասիսի տարածքային ստորաբաժանման կողմից 18.03.2009թվականին տրված թիվ 0190121 միասնական տեղեկանքի հիման վրա:

2. Կողմերի իրավունքները եւ պարտականությունները

2.1. Վարձատուն իրավունք ունի՝

2.1.1. պահանջել Վարձակալից՝ Գույքն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան:

2.1.2. Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ մուծելու վարձավճարը:

2.1.3. եթե Վարձակալը Գույքից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանն անհամապատասխան, պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները:

2.2. Վարձատուն պարտավոր է՝

2.2.1. Գույքը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում:

2.2.2. ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, Վարձակալին գրավոր տեղեկացնել Գույքն ազատելու անհրաժեշտության մասին՝ կապված շենքը հիմնական վերանորոգման կանգնեցնելու կամ քաղաքաշինական նկատառումներով այն քանդելու վերաբերյալ սահմանված կարգով ընդունված որոշումների հետ:

2.4. Վարձակալը պարտավոր է՝

2.4.1. Գույքն օգտագործել պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխան:

2.4.2. ժամանակին մուծել Գույքն օգտագործելու համար սույն պայմանագրի 3-րդ կետում նախատեսված վճարը (վարձավճարը):

2.4.3. սույն պայմանագրից ծագող իրավունքները << օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում գրանցել պետական լիազորված մարմնում: Նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված ծախսերն իրականացնել իր միջոցների հաշվին.

2.4.4. ժամանակին կատարել վարձակալված Գույքի ընթացիկ վերանորոգումը.

2.4.5. ապահովել Գույքի ինժեներական ցանցերի, հաղորդակցության ուղիների և սարքավորումների պահպանվածությունը:

2.4.6. վարձակալած Գույքի տարածքներում պահպանել սանիտարահակա- համաճարակային կայանների, պետհրշեջվերահսկողության մարմինների պահանջները, ինչպես նաեւ բոլոր այն կանոնները և նորմերը:

2.4.7. ժամանակին կատարել էլ. էներգիայի, ջրի և այլ կոմունալ վճարումները:

2.4.8. առանց Վարձատուի գրավոր համաձայնության չկնքել գրավի, ենթավարձակալության պայմանագրեր և չմտնել գործարքների մեջ (իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի մեջ Գույքը կամ դրա մի մասի վարձակալության իրավունքի ներդրում).

2.4.9. ապահովել Վարձատուի և նրա ներկայացուցիչների անարգել մուտքն տարածք՝ դրա զննման և ստուգման համար:

2.4.10. ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, Վարձատուին գրավոր տեղեկացնել վարձակալված Գույքի սպասվելիք ազատման մասին՝ կապված ինչպես պայմանագրի ժամկետն ավարտվելու, այնպես էլ դրա վաղաժամկետ դադարեցնելու հետ:

2.4.11. Գույքն ազատելիս այն սարքին վիճակում հանձնել ակտով՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

3. Պայմանագրով կատարվող վճարները և հաշվարկները

3.1. Գույքի համար ամսական վարձավճարը 1քմ. համար սահմանվում է 300/երեք հարյուր/ դրամ:

3.2. Գույքի համար ամսական վարձավճարը սահմանվում է. 173700/հարյուր յոթանասուներեք հազար յոթ հարյուր/ դրամ:

3.3. Վարձակալության պայմանագրի ժամկետը և վարձավճարի չափը ենթակա են փոփոխման՝ համաձայն սույն պայմանագրի 6.3 կետի:

3.4. Վարձակալը Վարձատուի հաշվին փոխանցում է վարձավճարը պայմանագրում նշված հաշվեհամարին՝ պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից յուրաքանչյուր եռամսյակ՝ եռամսյակի վերջին ամսվա 25 -ից ոչ ուշ, որի վերաբերյալ եռօրյա ժամկետում Վարձատուին է ներկայացնում վճարման անդորրագրերի պատճենները:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Վարձակալը պայմանագրի 3.2. կետում նախատեսված վարձավճարի կետանցի դեպքում յուրաքանչյուր օրվա համար Վարձատուին վճարում է տույժ՝ ապառքի 0.15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

4.2. Տույժի մուծումը կողմերին չի ազատում պայմանագրով նրանց վրա դրված պարտավորությունները կատարելուց:

4.3. Եթե Վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Գույքը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա Վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե նման վճարն ամբողջովին չի մարում Վարձատուին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:

5. Վարձակալած Օբյեկտի բարելավումները

5.1. Վարձակալած Գույքից Վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:

5.2. Վարձակալի կողմից կատարած վարձակալած Գույքի անբաժանելի բարելավումների արժեքը չի հատուցվում:

6. Հատուկ պայմաններ

6.1. Սույն պայմանագրից բխող Գույքի օգտագործման իրավունքը ծագել է 12.01.2009թ-ից, որը ենթակա է պետական գրանցման՝ նոտարական վավերացումից հետո 30 օրվա ընթացքում:

6.2. Պայմանագրի գործողությունը կարող է դադարել կողմերի համաձայնությամբ՝ ցանկացած այլ ժամկետում:

6.3. Պայմանագրում կատարվող փոփոխությունները և լրացումները կողմերը քննարկում են մեկամսյա ժամկետում և ձևակերպում լրացուցիչ համաձայնագրերով՝ նոտարական վավերացմամբ:

6.4. Կողմերի անվանման, գտնվելու վայրի, բանկային վավերապայմանների փոփոխման կամ վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են երկշաբաթյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին:

7. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը

7.1. Վարձատուի պահանջով՝ վարձակալության պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե Վարձակալը՝

7.1.1. Գույքն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ դրա նշանակության էական կամ բազմակի խախտումներով:

7.1.2. էականորեն վատթարացրել է Գույքի վիճակը:

7.1.3. սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը:

7.1.4. առանց Վարձատուի գրավոր համաձայնության կնքել է գրավի, ենթավարձակալության պայմանագրեր և մտել է գործարքների մեջ (իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի մեջ Գույքի կամ դրա մի մասի վարձակալության իրավունքի ներդրում):

7.2. Վարձակալի պահանջով՝ սույն պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե՝

7.2.1. Վարձատուն Վարձակալի օգտագործմանը չի տրամադրել Գույքը կամ խոչընդոտներ է ստեղծել Գույքը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար:

7.2.2. Հանգամանքների բերումով, որոնց համար Վարձակալը պատասխանատու չէ, Գույքը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Սույն պայմանագիրը կնքված է 4/չորս/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

9.2. Սույն պայմանագրի կնքման հետ կապված ծախսերը կատարված են վարձակալի կողմից:

9.3. Կողմերի միջև ծագած տարաձայնությունները լուծվում են փոխադարձ համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմերի վավերատարրերը՝

Վարձատու	Վարձակալ
Մասիսի քաղաքապետարան, Մասիսի ՏԳԲ Հ/Հ 900435101077 քաղաքապետի լիազորված անձ Արթուր Բաղալյան	Մասիսի տարածքային հարկային տեսչության լիազորված անձ Անահիտ Խաչատրյան

Երկու հազար ինը թվականի **մարտի տասնիններին** , սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ << Մասիսի նոտարական տարածքի նոտար՝ Աշոտ Վլադիմիրի Բարխուդարյանի կողմից:

Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև /իրավաբանական անձանց/ իրավունակությունը, նրանց ներկայացուցիչների և անշարժ գույքի նկատմամբ << Մասիսի քաղաքային համայնքի իրավունքները ստուգված են:

<< քաղ. օր-ի 611 հոդվածի համաձայն սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

Գրանցված է սեղանամատյանում 593 -ով:

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» << օրենքների:

Նոտար՝ Աշոտ Բարխուդարյան

ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՏԱԿԱԳԾԵՐ

ՀԱՍՑԵՆ: ՄԱՍԻՍԻ ԲԱՇԽԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՍԻ ԲԱՇԽԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՈՂ: ՄԱՍԻՍԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

Ղ. ԾԱՂԿԱՐՅԱՆ

ԲԱՇԽԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՂԵԿ. ՄԱՍՈՒ.

Լ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱԿԵՐԵՍԸ: 579,0 ք.մ.

2-րդ ՀԱՐԿ

H=3,3

h=3,0

δ=0,5



Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԲԱՇԽ ՊԵՏ՝ Ա. ՇԱՀԳԱՐՅԱՆ

Ա. հարկ. մակ-703 մ²

ՏՀՏ - 579 մ²

124 մ²

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ք.Մասիս Երկու հազար ինը թվականի դեկտեմբերի քսանութին

ՀՀ Արարատի մարզի, Մասիսի քաղաքային համայնքը, այսուհետ՝ «Կողմ-1», ի դեմս համայնքի ղեկավարի լիազորված անձ՝ Արթուր Ֆելիքսի Բադալյանի, ծնված՝ 29.07.1975թվականին, անձնագիր AE0663067, տրված 09.06.2000թ.-ին 044-ի կողմից, հաշվառված ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս, 3-րդ թ/մ, 3-րդ շենքի թիվ 45 բնակարանում /լիազորագիրը վավերացված է 19.11.2009թ-ին/, մի կողմից, և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Մասիսի տարածքային հարկային տեսչությունն այսուհետ «Կողմ-2», ի դեմս պետի լիազորված անձ՝ Անահիտ Կարապետի Խաչատրյանի, ծնված՝ 15.06.1965թվականին, անձնագիր AF0297717, տրված 19.05.2001թ.-ին 044-ի կողմից, հաշվառված ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս, 3-րդ թաղ., 11 շենքի թիվ 24 բնակարանում, /լիազորագիրը վավերացված է 22.12.2009թ-ին/ մյուս կողմից, ավագանու 24.07.2009թ. թիվ 02 և քաղաքապետի 19.11.2009թ. N658 որոշումների հիման վրա կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշել Մասիսի նոտարական տարածքի նոտար Ա. Բարխուդարյանի կողմից 19.03.2009թ. հաստատված և սեղանամատյանում թիվ 593-ով գրանցված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում՝ համաձայն պայմանագրի 6.3 կետի (այսուհետ՝ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1. պայմանագրի 1-ին կետի 1.2 ենթակետում «գործում է մինչեւ «31»դեկտեմբերի 2009թ» բառերը փոխարինել «գործում է մինչեւ «31»դեկտեմբերի 2012թ.» բառերով:

1.1.2. պայմանագրի 3-րդ կետի՝

- 3.1 ենթակետում «300/երեք հարյուր/ դրամ» բառերը փոխարինել 500/հինգ հարյուր/ ՀՀ դրամ» բառերով:
- 3.2 ենթակետում «173700/հարյուր յոթանասուներեք հազար յոթ հարյուր/ դրամ» բառերը փոխարինել 289500/երկու հարյուր ութսունինը հազար հինգ հարյուր/ դրամ» բառերով:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 01.01.2010թ.:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն Համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները՝ սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից դադարում են գործել:

2.3. Սույն Համաձայնագրի և Պայմանագրի դրույթների միջև հակասություններ ծագելու դեպքում կիրառվում է սույն Համաձայնագիրը:

3. Այլ պայմաններ

3.1. Համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել Կողմերի համաձայնությամբ:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից պայմանագրի անբաժանելի մասն է:

3.4. Սույն Համաձայնագրի, ինչպես նաև պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

4. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

«ԿՈՂՄ-1»	«ԿՈՂՄ-2»
Մասիսի քաղաքապետարան, Մասիսի ՏԳԲ Հ/Հ 900435101077 քաղաքապետի լիազորված անձ Արթուր Բադալյան	Մասիսի տարածքային հարկային տեսչության լիազորված անձ Անահիտ Խաչատրյան

Երկու հազար ինը թվականի դեկտեմբերի քսանութին, սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ Մասիսի նոտարական տարածքի նոտար՝ Աշոտ Վլադիմիրի Բարխուդարյանի կողմից:

Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը և իրավունակությունը ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում 3653 -ով,

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքների:

Նոտար՝ Աշոտ Բարխուդարյան

ՆՈՏԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ
НОТАРИАЛЬНЫЙ ДОКУМЕНТ
NOTARIAL DOCUMENT

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ք.Մասիս Երկու հազար հինգ թվականի հունիսի տասնհինգին

ՀՀ Արարատի մարզի, Մասիսի քաղաքային համայնքը, այսուհետ՝ «Կողմ-1», ի դեմս համայնքի ղեկավարի լիազորված անձ՝ Արթուր Ֆելիքսի Բադալյանի, ծնված՝ 29.07.1975թվականին, անձնագիր AE0663067, տրված 09.06.2000թ.-ին 044-ի կողմից, հաշվառված ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս, 3-րդ թ/մ, 3-րդ շենքի թիվ 45 բնակարանում /լիազորագիրը վավերացված է 09.06.2010թ-ին/, մի կողմից, և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Մասիսի տարածքային հարկային տեսչությունն այսուհետ «Կողմ-2», ի դեմս պետի լիազորված անձ՝ Գագիկ Գիլոյանի, ծնված՝ 28.05.1966թվականին, անձնագիր AA0296492, տրված 14.09.1996թ.-ին 044-ի կողմից, հաշվառված ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս, Ն/թ 5-րդ շենք թիվ 16 բնակարանում, /լիազորագիրը վավերացված է 27.05.2010թ-ին/ մյուս կողմից, ավագանու 07.05.2010թ. թիվ 11 և քաղաքապետի 07.06.2010թ. N288 որոշումների հիման վրա կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշել են Մասիսի նոտարական տարածքի նոտար Ա. Բարխուդարյանի կողմից 19.03.2009թ. հաստատված և սեղանամատյանում թիվ 593-ով գրանցված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում՝ համաձայն պայմանագրի 6.3 կետի (այսուհետ՝ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1. պայմանագրի 1-ին կետի 1.2 ենթակետում «գործում է մինչեւ «31»դեկտեմբերի 2012թ» բառերը փոխարինել «գործում է մինչեւ «31»դեկտեմբերի 2060թ.» բառերով:

1.1.2. պայմանագրի 3-րդ կետի՝

- 3.1 ենթակետում «500/հինգ հարյուր/ ՀՀ դրամ» բառերը փոխարինել 250/երկու հարյուր հիսուն/ ՀՀ դրամ» բառերով:
- 3.2 ենթակետում «289500/երկու հարյուր ութսունինը հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ» բառերը փոխարինել 144750 /մեկ հարյուր քառասունչորս հազար յոթ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ» բառերով:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 01.07.2010թ.:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն Համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները՝ սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից դադարում են գործել:

2.3. Սույն Համաձայնագրի և Պայմանագրի դրույթների միջև հակասություններ ծագելու դեպքում կիրառվում է սույն Համաձայնագիրը:

3. Այլ պայմաններ

3.1. Համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել Կողմերի համաձայնությամբ:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից պայմանագրի անբաժանելի մասն է:

3.4. Սույն Համաձայնագրի, ինչպես նաև պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

4. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

«ԿՈՂՄ-1»	«ԿՈՂՄ-2»
Մասիսի քաղաքապետարան, Մասիսի ՏԳԲ ՀՎՀ 900435101077 քաղաքապետի լիազորված անձ Արթուր Բադալյան	Մասիսի տարածքային հարկային տեսչության լիազորված անձ Գագիկ Գիլոյան

Երկու հազար հինգ թվականի հունիսի տասնհինգին, սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ Մասիսի նոտարական տարածքի նոտար՝ Աշոտ Վլադիմիրի Բարխուդարյանի կողմից:

Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը և իրավունակությունը ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում 1439 -ով,

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքների:

Նոտար՝ Աշոտ Բարխուդարյան

ՆՈՏԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ
НОТАРИАЛЬНЫЙ ДОКУМЕНТ
NOTARIAL DOCUMENT